Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 322 - Ա
որոշման

«ՎԱՐԴԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԲԱԺՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԶԻՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Նկարների պահպանման, վերականգնման գործընթացը ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով «Հայաստանի ազգային պատկերասրահ» պետական ոչ առևտրային կազմակերպության վերականգնման բաժնի վերանորոգման և վերազինման աշխատանքների իրականացում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Հրանտ Վարդանյան փողոց 6, ՀՎՀՀ՝ 02269952)
4.	Ծրագիրը կատարողը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Հրանտ Վարդանյան փողոց 6, ՀՎՀՀ՝ 02269952)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Երևան քաղաք, բնագավառը՝ մշակութային
6.	Ծրագրի բյուջեն	140,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Հայաստանի ազգային պատկերասրահ» պետական ոչ առևտրային կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, 0010, Արամի փողոց, 1 շենք)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի հունիսի 15-ից մինչև 2027 թվականի մայիսի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) «Հայաստանի ազգային պատկերասրահ» պետական ոչ առևտրային կազմակերպության վերականգնման բաժնի վերանորոգման (հիմնանորոգման) աշխատանքների իրականացում՝ 85,000,000 դրամ արժողությամբ: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունիսի 15-ից մինչև 2027 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում:

		2) նկարների պահպանման, վերականգնման համար անհրաժեշտ մասնագիտական սարքավորումների, գույքի ձեռքբերում և ներմուծում ու անհատույց հանձնում «Հայաստանի ազգային պատկերասրահ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ 55,000,000 դրամ արժողությամբ: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունիսի 15-ից մինչև 2027 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) վերանորոգման (հիմնանորոգման) աշխատանքների հետ կապված ծառայությունների ձեռքբերում՝ 85,000,000 դրամ արժողությամբ: 2) նկարների պահպանման, վերականգնման համար անհրաժեշտ մասնագիտական սարքավորումների և գույքի ձեռքբերում ու ներմուծում՝ 55,000,000 դրամ արժողությամբ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	1) ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: 2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

04.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ